ՆԱ ՏԵՍԵԼ Է ԵՐԵՎԻ ԱՐԵՎԱՅԻ՜Ն ՄԻ ՔԱՂԱՔ

(Պատմում է վաստակավոր ճարտարապետ Տիրան Մարությանը)

Գեղեցիկ է ասել հայ մեծ բանաստեղծը՝ ուղղված մեծ ճարտարապետին, երբ նա արդեն չկար: Իսկ մինչ այդ նա հասցրել էր ստեղծել իր հանճարեղ գլուխգործոցները, որոնց լիակատար իրականացումը, սակայն, մնաց հաջորդ սերունդներին:

Ճարտարապետական երկը, ըստ ամենայնի արժեքավորվում է, երբ կառուցվում, դառնում է իրականություն, իսկ նախագծումից մինչև իրականացումը տևում են տարիներ, երբեմն շատ տարիներ: Այս առումով ստեղծագործող ճարտարապետները այլ արվեստագետներից ակներև պակաս երջանիկ են, քանի որ շատ դեպքերում չեն հասցնում տեսնել իրենց մտահղացումների ամբողջական իրականացումը: Այդպես ստացվեց նաև մեծատաղանդ ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանի հետ: Նա երկար աշխատեց Երևանի գլխավոր հատակագծի առանձին հանգույցների, թաղամասերի ու կանաչ տարածությունների, փողոցների ու հրապարակների լուծումների կատարելագործման վրա, այդ գործում ցուցաբերելով սկզբունքայնություն, կյանքի և արվեստի պահանջների նկատմամբ մեծագույն ուշադրություն: Քաղաքների կառուցումը չի ավարտվում մի սերնդի կյանքի ընթացքում, այն երկարում է, շարունակվում անընդհատ ու շարունակաբար ընդարձակվում, ընդունում է նոր պարագծեր:

Թամանյանից հետո անցել է շուրջ 32 տարի: Այդ ժամանակաընթացքում Երևանը մի քանի անգամ ընդարձակվել է: Իրականություն են դարձել մեծ քաղաքաշինարարի վսեմ մտահղացումները, իսկ որոշ ծրագրեր դեռ նոր են իրականացվելու: Ահա Շահումյանի պուրակի շարունակությունը նույնանուն հրապարակից մինչև Կարմիր բանակի փողոցը, որի վերջավորության վրա՝ նոր ձևավորվելիք հրապարակում, կանգնեցվելու է հայ ժողովրդի պանծալի զավակ, Լենինի աշակերտ ու զինակից Ալեքսանդր Մյասնիկյանի հուշարձանը: Կիրովի անվան մանկական այգին, որը հիշյալ պուրակի աջակողմում է, ստորերկրյա անցումով հաղորդակցվելու է Կոմունարների անվան այգու հետ: Սրանք Թամանյանի մտահղացումներից են, որոնք մինչև օրս պահպանում են իրենց ուժը:

Երևանի բուն կենտրոնում իր իրականացմանն է սպասում Հյուսիսային պողոտան, որը Թամանյանի մտահղացմամբ պիտի հանդիսանա կապ՝ Լենինի անվան հրապարակի և օպերայի ու բալետի շինության շուրջը կազմակերպվող կուլտուրայի հրապարակի միջև: Հյուսիսային պողոտայի շարունակությունը դեպի հյուսիս՝ Թամանյանի անվան փողոցի վերջավորությունից սկսած կբարձրանա մինչև Սովետական Հայաստանի 50-ամյակին նվիրված կոթողը: Այստեղ կկազմավորվի մի շքեղ միջավայր, որի մտապատկերը պիտի տեսներ Չարենցի՝ Թամանյանի անմահ հիշատակին նվիրված բանաստեղծության մի հատվածում.

Ակնթարթում մի վսեմ, որ
    երկարում է դարեր,
Փողփողում են ուղեղում—սիրտ
    պայթելու չափ այրման—
Սյունաշարքե՜ր, տեռասնե՜ր,
    աստիճաններ մարմարե,
Եվ պարտեզներ ոսկեզօծ,
    շատրվաններ երգաձայն...

Նման մի շքեղ միջավայր էլ պետք է ստեղծվեր մեծ համերգասրահի շուրջը, որը, սակայն, երկու պողոտաների խաչմերուկներով վերածվեց առանձին-առանձին հատվածների: Ուզում ենք հավատալ, որ ոչ հեռու ապագայում պողոտաների այդ խաչմերուկը կդառնա ստորերկրյա, և Թամանյանի այս սքանչելի մտահղացումը նորից կյանք կառնի՝ պուրակը կամբողջանա, կստանա բովանդակություն:

Օպերայի շենքը հիմնականում կառուցվել է համապատասխան Թամանյանի մտահղացմանը, բայց դեռ ավելիքներ կան, որ այն լինի լիակատար: Որքան էլ մեծ լինեն դժվարությունները, շինության ընտրանկերտ վերնամասը պետք է ծածկվի Փամբակի «խարտյաշ» գրանիտով: Այդ դեպքում այն կինչի ամբողջ ուժով և երկնքի ու կանաչ սարալանջի ֆոնի վրա կներկայանա ինչպես հեքիաթում, այնպես, ինչպես երազում էր տեսնել Թամանյանը:

Մեծ մտածողների հանճարեղ մտահղացումները ժողովրդի սեփականությունն են և նա էլ դրանք յարձնում է ռեալ իրականություն: Իրականություն կդառնան նաև Թամանյանի բոլոր արևաշատ մտահղացումները:

Զրույցը ճարտարապետների հետ վարեց

ՍԵԴՐԱՆՈՒՀԻ ԳԵՂԱՄՅԱՆԸ